Համարը	ՀՕ-275-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2011.12.14/66(869) Հոդ.1639	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	15.11.2011
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	01.12.2011
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	24.12.2011	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2011 թվականի նոյեմբերի 15-ին

ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 7. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում լիազոր մարմնի լիազորությունները

1. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) արյան ազգային ծրագրի մշակումը և ներկայացումը կառավարության հաստատմանը.

~~3) օրենքով սահմանված կարգով արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովման պետական վերահսկողությունը.~~

4) փոխներարկման համար անհրաժեշտ քանակության արյան և դրա բաղադրամասերի պլանավորումը, ապահովումը, ներառյալ՝ արտակարգ իրավիճակներում.

5) դոնորի կողմից արյուն կամ արյան բաղադրամաս հանձնելու հաճախականության հաստատումը.

6) դոնորության համար հակացուցումների ցանկի հաստատումը.

7) դոնորի իմունացման կարգի հաստատումը.

8) դոնորին տրվող տեղեկատվական թերթիկի, համաձայնության և դոնորի առողջության վերաբերյալ հայտարարագրի ձևերի հաստատումը.

9) դոնորի բժշկական հետազոտությունների ցանկի և հետազոտությունների իրականացման կարգի հաստատումը.

10) արյան և դրա բաղադրամասերի, արյան նմուշի հետազոտության ցանկի և հետազոտությունների կարգի հաստատումը.

11) փոխներարկվող արյան բաղադրամասերի համատեղելիության որոշման կարգի հաստատումը.

12) արյան և դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում բժշկական փաստաթղթերի ձևերի ու դրանց լրացման կարգերի հաստատումը.

13) արյան և դրա բաղադրամասերի պաշարների հավաքման և պահպանման կարգի հաստատումը.

14) արյան ռեեստրի վարումը:

Հոդված 11. Արյան ռեեստրի վարումը

1. Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման կարգը հաստատում է կառավարությունը:

2. Արյան ռեեստրում դոնորների վերաբերյալ գրանցված տեղեկությունները համարվում են բժշկական գաղտնիք և կարող են տրամադրվել արյան դոնորությամբ և փոխներարկմամբ զբաղվող լիցենզավորված բժշկական կազմակերպություններին սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով:

3. Արյան ռեեստրում գրանցված դոնորների մոտ շրջապատի համար վտանգավոր հիվանդություն կամ վարակակրություն հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ~~պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը~~ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար:

4. Արյան ռեեստրում գրանցված բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները կարող են այլ անձանց տրամադրվել օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 38. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ հսկողությունը

1. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ հսկողությունը ներառում է ~~պետական հսկողությունը~~ պետական վերահսկողությունը և որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգի իրականացումը:

2. ~~Պետական հսկողությունը~~ Պետական վերահսկողությունը և որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգը իրականացվում են արյան դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության հետ կապված բոլոր փուլերում:

Հոդված 39. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ պետական ~~հսկողությունը~~ վերահսկողությունը

1. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ պետական ~~հսկողությունն~~ վերահսկողությունն իրականացնում է ~~լիազոր մարմինը~~ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

2. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ պետական ~~հսկողությունն~~ վերահսկողությունն

իրականացվում է նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների միջոցով:

3. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ պետական հսկողությունը չպետք է խոչընդոտի հսկվող կազմակերպության բնականոն գործունեությանը: